

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

ՍՐ. ԷԶՄԻԱԾՆԱ ՎԵՐԱԾԻՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ*)



ուրբ էջմիածնա վերաշինութ-
թյան խնդիրը նոր չէ, այո՛ դա-
շատ հին խնդիր է, և որքան
հնացել, այնքան էլ ծանրացել
է, կյանք ստանալով գլխավորապես կաթո-
ղիկոսական ընտրության միջոցին:

Մասնավոր վերանորոգություններ կա-
տարվել են Մակար ու Մկրտիչ կաթողիկոս-
ների օրով, բայց այդ վերանորոգություննե-
րը եղել են առանց մի տրոշ ծրագրի, մի-
միայն գործնական նպատակներով, և ավելի
ոճի ավերման՝ քան վերականգնելուն են ծա-
ռայել: Մակար կաթողիկոսը այդ հարցի
կարևորությունը վերջում թեև զգաց, բայց
դժբախտաբար մի մեծ սխալ գործելուց հե-
տո միայն: Հայկական տաճարի ամենաբնո-
րոշ մասերից մեկը և անհրաժեշտ պատ-
կանելիքը անպայման նորա պատվանդանն
է. դա մի՛ սրբատաշ քարից շարված և երեք,
կամ երեքմեկ ավելի, աստիճաններից
կազմվող բարձրություն է, որի վերա փորձա-
կերպով կանգնած է տաճարի շենքը, իբրև
վկա մեր նախնայց բարձր գեղարվեստական
զգացմունքին, իբրև կոթող՝ մեծ դժվարու-
թյամբ ձեռք բերված և դարերի ընթացքում
ծաղկեցրած բաղադրակրթության: Դա այն
պատվանդանն է, որի վերա հին հելլենացիի
և կառուցանող էին իրենց սքանչելի տա-
ճարները և որը մենք ժառանգել ենք հին դա-
րերից՝ իբրև անգին գոհար, որով պի-
տի պարծենանք, որովհետև նա գործնական
պիտույքից չէ առաջ եկել, այլ միմիայն
զուտ, անարատ գեղեցկության պահանջի
քնազդումն է նորան հնարել: Մա-
կար կաթողիկոսին հասկացրել էին,
որ դա մի բոլորովին ավելորդ
ու անօգուտ բան է և կարելի է նո-
րան հեռացնել առանց տաճարին մեկ վնաս
տալու, — ի՞նչ փուլթ, որ տաճարը ամեն
բանից առաջ — մի գեղարվեստական երկա-
սիրություն է... Բայց սխալը կատարելուց
հետո Մակար կաթողիկոսն ինքը տեսավ ու
հասկացավ, որ պետք չէր այդպես վարվել և
մտադրվեց երկրորդ անգամ վերաշինել տա-
ճարը ավելի ընդարձակ ծրագրով և այդ դի-
տավորությանը և ես, նվաստս ներկա ու
մասնակից էի:

Լավ միտքս է, ինչպես եկավ Տփլիսից
ճարտարապետ պ. Շտեբն իր օգնականներով
և մոտ երկու-երեք շաբաթվա երկունքից հե-
տո, ծնեց վերջապես վերաշինության ընդ-
հանուր նախագիծը: Այդ նախագիծով վերա-
շինությունը պիտի նստեր հարյուր ու քսան
հազար ռուբլի: Հիշում եմ նաև, ինչպես Մա-
կար կաթողիկոսը մի մանկան պես ուրա-
խացավ, երբ մակարդակներից երևաց, որ
տաճարի պատվանդանը իր աստիճաններով
հանգեցրձ վերատին կանգնած է: Բայց դրա-
նից հետո շուտով Մակար կաթողիկոսը վախ-
ճանվեց և վերաշինության խնդիրը դարձավ
երկրորդական, իսկ նորա համար նշանակ-
ված գումարի մնացորդը ծախսվեց ուրիշ
նորանոր շինությունների կառուցման վերա,
անիշխանության երկար օրերում:

Մկրտիչ կաթողիկոսի օրով խնդիրը նորից
կյանքի կոչվեց և հանգուցյալ Հայրիկը հան-
գուցյալ Սահակ Ժամհարյանի միջոցով ինձ
հրավիրում էր Սբ. էջմիածին դարձյալ այդ
խնդիրով զբաղվելու: Այդ սիրավիր հրավե-
րին ես, նույն պ. Սահակ Ժամհարյանի խոր-
հրդով, մի ընդարձակ զեկուցումով պա-
տասխանեցի, որի մեջ բացատրում էի, թե
ինչպես եմ ես հասկանում վերաշինության
գործը և թե հանձն կարող եմ առնել այդ
պատասխանատու և շատ պատվավոր գործը
միմիայն այն դեպքում, եթե նորանք ևս ինձ
հետ համաձայն և համամիտ գտնվին այդ
գործի մեջ: Պատասխան չստացա:

Պայմաններս շատ բնական ու հասկանա-
լի էին այդպիսի դեպքերի համար և այն է —
ես վերանորոգության ձեռնամուխ լինելու
համաձայն էի ոչ այլ կերպ, եթե ոչ բարձրա-
ձայն, հրապարակաբան և հայտնի կերպով.
խնդրում էի իրավունք նախագծերիս նկար-
ներն ու ուղղագծերը հանդես հանել գեղար-
վեստի մեծ կենտրոններում՝ Մյունխեն,
(Մյունխեն. Մ. Խմբ.), Փարիզ և ապա
Մոսկվա, Պետերբուրգ ու Տփլիս,
յսել մասնագետների քննադատություններ,
հասկացողների կարծիքներ և ապա միայն
ձեռք զարնել իրագործելու:

Ես ուզում էի հպարտանալ, պարծենալ այդ
հանձնարարությամբ. վերանորոգումը այն
ժամանակ ղեռ միմիայն տաճարի ներսին էր
վերաբերում: Ճարտարապետ Շտեբնի պատ-
րաստած մակարդակը շատ բնորոշ նախագիծ
էր, մի օտարական ճարտարապետին հատուկ
թերություններով, ճարտարապետի, որը հայ

*) Պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 57,
գործ 197, էջ 22.—27:

կական ոճը իր սրտի մեջ բաժանել էր իր հավանած ու չհավանած տարրերին, առանց շրջանների ու դարերի խտրության: Նորա անհոգ ու անզգա կարծիքովը ամենալավը այն է, որ էջմիածնա տաճարի շենքը մեկ ընդհանուր ձևի գա և մեկ ձուլվածք ներկայացնե, դրսից Կովկասի սովորական Վիր-Հայկական նորագույն եկեղեցիներին նմանելով, և եթե հարկն ստիպե, նաև Անվո 10-րդ դարու քանդակներով զարդարել:

Միայն մեզ հայերիս է հասկանալի, թե այդ վերաբերումն ինչ աստիճան չոր ու ցամաք է: Ինչ կատկած, որ պիտի զղջայինք, եթե այդպիսի մի սըխալ կատարվեր և այն ժամանակ ի՞նչ Պրոմեթեոսի կրակով հարուցանեինք Սբ.

էջմիածնա պատերի պատմական նշանակությունը:

Մի՞թե տեղիք ունինք տարակուսելու, որ մեր բազմաբախտ հայրապետները, ձեռնարկելով նորոգություններ և փոփոխություններ Մայր տաճարի մեջ, ոգևորված են եղել ամենագեղեցիկ նպատակներով. նորանք չեն հասկացել միայն ոճի կարեւորությունը և վերաշինությունները կատարել են միմիայն գործնական նպատակներով: Նորանք չեն իմացել, որ ճարտարապետական երկասիրությունը մի ոտանալնոր է և կամ շարական, և նորա չափը խախտել ու վանկերի թիվը փոխել մի վարպետի քիմքով— չէ կարելի: Բայց այդ անգիտակցական սխալները, նորանց հեղինակների դիրքին ու ժամանակի ոգուն շնորհիվ, պատմության էջեր են դարձել: Ի՞նչ անենք, երբ կյանքի բովանդակությունը աղքատանում է, կենսական նպատակները թուլանում են, նվազում է նաև ստեղծագործության ուժը: Բայց ժամանակը—այդ նրբագագ մեծ գեղարվեստագետը, հավաքում է ազգի ժպիտը, արտասուքը, արյունը և համեմում նորանցով գեղարվեստի նաև համեստ երկասիրությունները, դարձնելով նորանց փեղեցիկ ու անմահ պատմական կոթողներ: Եվ ինչ որ ներելի է մեր հայրա-

պետների միամիտ շերմեռանդությամբ— մի դիտակից ճարտարապետի կողմից դառնում է կատարյալ հանցանք և մեկնվել վարող է միմիայն նորա անհարազատ ու անհոգ վերաբերվելովը. նորա ի՞նչ փուլին է որ—

«Նոքա հառաչք են հայրենյաց

Նոքա շերթան սրբառեսի բաց»:

Անկաստես էի, թե ինչպես վերաշինվում էր Վենետիկի դքսական պալատը և Վալենսիո կաթողիկեն (Սպանիա).—կամավ այդ շենքերն եմ օրինակ բերում, որովհետև առաջինը մի բազմաթիվ ոճերի խառնուրդ է ներկայացնում, բյուզանդականիցը սկսած

մինչև գոթականն ու վերածնության ոճը. իսկ վերջինը, այսինքն Վալենսիո կաթողիկեն, ունի մի հարավային ճակատ հռոմեական ոճով, հյուսիսային—գոթական, արևմտյան— տասն և յոթերորդ դարի բառքը, իսկ արևելյան ճակատին կպած է արքեպիսկոպոսական պալատը—վերածնության ոճով, որ ամեն մեկ շինող իր դարի ոճովն է նորան շարունակել, դարձնելով տաճարն այսպիսով մի քարացած պատմություն իր անցկացրած դարերի:

Հայտնի բան է, եթե նորա վերաշինությունը Շտերնի պես



Վարդգես Սուրենյանց

ճարտարապետի հոգացողությունը հանձնված լինելը, պիտի ամբողջ շենքը մի ընդհանուր ոճի բերվեր, բայց թե ի՞նչ ոճի, այդ օտար ճարտարապետի անհոգ ճաշակը պիտի որոշեր: Ով որ առեցել է Փարիզի մոտ գտնվող Մեն Դենի եկեղեցին հռոմեական կան ոճով, որը 1140 թվականի շենք է, անշուշտ շատ զարմացած կլինի, թե ինչպես լավ է պահպանվել այդ հուշակալ միջնադարյան տաճարը: Այո, լավ է պահպանվել, որովհետև նորա վերաշինողը եղել է աշխարհահռչակ Վիոլե Լե Դյուբլե՝ յոթանասնական թվականներին. ինչպիսի սիրով, երկյուղածությամբ ու հաղթանքով այդ մեծ ճարտարապետը, հին քարերը նույնությամբ ընդօրինակելով, վերականգնել ու

ճարտարապետի հոգացողությունը հանձնված լինելը, պիտի ամբողջ շենքը մի ընդհանուր ոճի բերվեր, բայց թե ի՞նչ ոճի, այդ օտար ճարտարապետի անհոգ ճաշակը պիտի որոշեր: Ով որ առեցել է Փարիզի մոտ գտնվող Մեն Դենի եկեղեցին հռոմեական կան ոճով, որը 1140 թվականի շենք է, անշուշտ շատ զարմացած կլինի, թե ինչպես լավ է պահպանվել այդ հուշակալ միջնադարյան տաճարը: Այո, լավ է պահպանվել, որովհետև նորա վերաշինողը եղել է աշխարհահռչակ Վիոլե Լե Դյուբլե՝ յոթանասնական թվականներին. ինչպիսի սիրով, երկյուղածությամբ ու հաղթանքով այդ մեծ ճարտարապետը, հին քարերը նույնությամբ ընդօրինակելով, վերականգնել ու

դարձյալ հնի տեղն է դրել: Տաճարն իրավոր աշխատի տպավորություն է թողնում, ասես ոչ ոք նորան չէ դիպել, այլ նա ինքը հնացել է առանց մաշվելու: Դա այն տաճարն է, որտեղ քի մեջ այլ թագավորական շիրիմների, նաև մեր Լեոն վեցերորդի գեղեցիկ ման է գտնվում:

Այժմ, հայտնի բան է, հարց է ծագում, թե ի՞նչ պետք է ուրեմն անել: Նախ և առաջ պետք է հետաքրքրվել թե Եվրոպայի մեծամեծ թանգարաններում դանձվող գեղարվեստական հնավուրց երկասիրությունները ի՞նչ եղանակով են վերանորոգվել և թե նախքան վերանորոգվելը ինչ դատողությունների ու վեճերի առիթ են տված նախապես:

Կարելի է շատերիս համար դարձանալի և նոր երևա, որ օրինակ աշխարհահռչակ Ռաֆայելի պատկերները արդեն փրկուհիք կտալ են փոխել, նորանց ներկերը շատ տեղ ապրող տարածություններ վերաբոլորվին թափված են եղել և վերականգնվել են հմուտ վարպետի անխնայ ջանքով: Դա հիմա այնպիսի տպավորություն է գործում, ասես ամենևին մնաս չեն կրել համաճարակ ժամանակի գրկում և այդպես էլ համարյա բոլոր մնացյալ փր ժամանակակից նկարիչների գործերը: Մարմարե հնադարյան արձաններից շատերը հողի տակից փրված, հանված են եղել գրեթե Կոթած շաքարի դրություն հասած ու նորոգվել են կտոր կտորի կայանելով և պակաս տեղերը նույնությամբ լրացնելով:

Այդ արձաններից շատերի պակաս անդամներն իր ժամանակին դարձել են համաերոպական վիճաբանություն յուրեք, որի մեջ մասնակցել են աշխարհի ամենամեծ փաստունները: Այդպես գործօրինակ Լաոկոոնի արձանախմբի մեջ պակասող ձեռքը զարկ է տվել հռչակավոր գերմանական փիլիսոփաբանաստեղծ Լեսսինգի երկասիրությանը, որը ողջ Եվրոպան բերան է անբռնում և որը ծառայում է իբրև օրինակ այդ տեսակ քննադատության: Այդ գրքի մեջ, որը կրում է արձանախմբի անվամբ «Laokoön» վերնագիրը, մեծ քերթող-փիլիսոփայն ասողաբան է իր դատողությունները, թե ինչու Լաոկոոնի աջ ձեռքը պետք է նորա պարանոցին դիպչի և ոչ դեպի աջ կողմը պարզվի, ինչպես կարծում էին ռուսները:

Նաև մեր օրով, դեռ նոր, մի քանի տարի առաջ Գերմանիո կայսեր հրապարակ, Փարիզի Լուվրում գտնվող Մեյսոնի Աստղիկի երկու պակաս բազմակները ընդհանուր համակրուպական քննադատության նյութ էր դարձած:

Նույն Գերմանիո կայսեր առաջարկությամբ Բեռլինում վերաշինվել է հին հելլենական Բերգամյան տաճարը, որի առանձին բեկորները Բեռլինի աղագյին թանգարանում էին գանձվում: Այդպես են վարվել միշտ մի նշանավոր հնություն վերանորոգելիս, և ի՞նչ կատարած, որ այդպես ևս պետք է վարվել մի պատմական գեղարվեստական հնություն վերանորոգելիս: Պետք է հավասար պատվով վերաբերվել ինչպես դեպի շենքի ոճը, նույնպես և նորա քարերի շարվածքի բոլոր առանձնատվությունները: Պետք է չենք ամենայն ջանքով ուսումնասիրվի իր տեղում—նախքան մակարդակը կազմելու նախապատրաստություններ:

Պետք է ամենայն ուշադրությամբ դիտել ու նկատել ամեն մի մանրամասնություն, որպեսզի հեշտ կարելի լինի նորան նույնությամբ վերականգնել:

Շատ անգամ նույնիսկ աննշան երևացող մանրամասնություն կարող է զարկ տալ հնագույն, նախկին ձևերի գյուտին:

Հայտնի բան է, որ սրա համար պետք է հատաչագույն լավ տեղյակ լինել շենքի պատմությունը: Մեծ զգուշությամբ պաշտպանելու է շենքի ձևը, խուսափելով շատ ճարտարապետների հատուկ հակումից—ամեն տեղ իրանց սիրած ոճը մտցնել:

Պետք է զգուշանալ նաև ամենահին ձևերը վերականգնելու շափազանց մեծ եռանդից: Ավելի ուշ շինված հավելվածները, ինչպիսիք են այս դեպքում Զանգաթատունը, Իջման տեղը, Թանգարանը, Խորաններն ու Սեղանները, ամենայն ջանքով պիտի պաշտպանվեն: Նորանք զարդարում են տաճարը և ներկայացնում են մի որոշ գեղարվեստական շահ և բացի այդ, վկայագրում են, իբրև հիշատակաբաններ, տաճարի երկար պատմությունը:

Վերականգնվելու են անպատճառ մեր օրով աղավաղված մասերը—որոնք ոչ դուրսաբերված, այլ հանումի նշանակություն են ունեցել:

Իմ խորին համոզմունքով Սբ. Էջմիածնա տաճարի թե՛ ներքին և թե՛ արտաքին ձևերին դիպչելը անհերքելի մեծ սխալ է:

Տաճարը պիտի աչպես վերանորոգվի, որ մարդ չիմանա, որ նորան ձեռք է դիպել և այնպես տպավորություն գործե, իբրև թե ընդհանրապես նորան մնաս չէ հասած եղել անողք ժամանակի շնից: Սբ. Էջմիածնա տաճարի արտաքին ձևերը չպիտի խախտվին և ի մի շենք ձուլվին հետևյալ պատճառով:

Սբ. Էջմիածնա տաճարի շենքը երեք դանադան ժամանակ շինված մագերից է բաղկացած: Բուն տաճարը, որը երևում է վեց կամ յոթներորդ դարու շենք է, ապա 1627 թվին Մովսես կաթողիկոսի ակամա ու փլուզու և նղիադար կաթողիկոսների ավարտած դանադակատունը արևմտյան ճակատին կալած: Այդպիսով տաճարը դարձել է վկա ազգի մտավոր դարգացման երեք դանադան շրջանների, նորա ամեն մեկ մասը պատմության էջ է դարձել, որի տողերը բանաստեղծություն-գեղարվեստորեն ավարտանում են ազգի թե՛ բախտավոր օրերի և թե՛ մեծ տառապանքների մասին. նորանք պատմում են ազգային քաղաքակրթության ելևէջների վեպերն հին դարերից սկսյալ մինչև մեր օրերը: Նորանք մարմնացյալ հիշատակարաններ են իրանց դարերի աշխարհայեցողությունը պատմականորեն կյանքը կաղմվում է ժպիտներից ու արտասուքներից, որոնք պատմության միջոցով ավանդվում են սերնդից սերունդ ժամանակի ճարտար ձևերից անցնելով: Ո՞ր պատմություն արտադրողը փրատունը ունի նորա էջերից ջնջել ներսնի կամ Կալիգուլայի անունները միմիայն այն պատճառով, որ դորանք իր բարձր ու չարի հասկացողությունը շեն համապատասխանում: Բացի այդ, ամենքին հայտնի է, որ մի ճարտարապետական երկասիրության գեղեցկությունը կախված է անտարակույս նորա առանձին մասերի փոխադարձ հարաբերությունից— ճարտարապետության հոգին նորա ներդաշնակ ամբողջությունն է: Երբ ավագ տաճարի շենքն ստեղծող ճարտարապետը ձեռնամուխ է եղել փր գեղարվեստական երկասիրությանը, նա ի նկատի է ունենել որոշ չափի ու ձևի դունք ու պատուհաններ և վերջապես խստիվ մտածված գմբեթ, որն փր չափերով—բարձրությամբ ու տրամագծով— ներդաշնակում էր շենքի չափերին ու ձևերին:

Հաջորդ դարերում հառաջացած նորագույն մասերը, խմաստուն բախտի բերամբ, տարբեր ոճով լինելով, ավագ շենքի համա-

չափությունը ու ներդաշնակությունը շեն խախտել—միջին շենքը մնացել է միջին շենք, իսկ նորան կալած երկու հավելվածները որոշ դաշնակցությամբ ստորոգվել են նորան: Տաճարը դարձել է ոտանավոր երեք տներից կաղմված:

Այժմ երևակայենք այդ բոլորն ի մի շենք ձուլված—նախ և առաջ գմբեթը անտարակույս պիտի փոքր դա, ադդեն իր չափերից դուրս եկած շենքի համար, և անպատճառ տեղից շեղված պիտի հայտնվի—առաջին ճարտարապետի բոլոր հանձարն ու վաստակը, նորա նվիրական ճաշակը և վարպետությունը պիտի անդունդը գլորվին... Շենքի դունքը, պատուհանները և ընդհանրապես բոլոր ճարտարապետական անդամները որոշ թշնամական դիրք պիտի ընդունին ընդհանուրի դեմ և ամբողջը պիտի դառնա մի տարօրինակ, անճաշակ զանգված: Գեղեցկության և շենքի սկզբնական տեսքի մասին և ոչ խոսք կարող է լինել. պատերը որքան էլ զարդարվին Անվուժ աղբյուրի սովորական դարձած քանդակներով, իրանց արտասովոր ու ապօրինի չափերի շնորհիվ կմնան միշտ անպաճույճ ու աննրպատակ:

Այս համառոտ ղեկուցումը ներկայացնելով, ես պարտքս համարեցի ցույց տալ գլխավորապես, թե ի՞նչ նախապատրաստական հոգսերով պիտի զբաղվի Սբ. Էջմիածնա մկաբանությունը, դեռ գործի իրագործումը վարպետ և սակայն պակաս տեղյակ ճարտարապետների ձեռքը հանձնել:

Այն հանձնաժողովը, որը պիտի ծրագիրը կաղմնու հոգսն իր վրա առնե, պիտի անպատճառ աշտեղ հիշված պայմանները ծրագրի մեջ մտցնե ու ստիպողական դարձնե:

Միմիայն այս կերպ վերաշինելը կարող է կանոնավոր և օրինավոր համարվել, որովհետև նա միայն կփրկե ավերումից ու աղավաղումից մեր սրտերի համար թանկագին գեղարվեստական դժադը, որը շունի իր հասակակիցը և նման ամբողջ աշխարհում և որի դիրք մենք դեռ ապագայում պիտի հասկանանք:

